ՋՈՀՐԱԲՅԱՆ Է.Ա.

ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1918 թ.

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱԳԻՏԱԿ» 2000

թիւնների բոլոր ոյժերով»։* Իսկ դա նշանակում է, որ նա գործելու է կենտրոնից անկախ ու ինքնուրույն, որ սկիզբ է դրվում Ռուսաստանից Անդրկովկասի անջատման, որը փաստորեն, երեք ժողովուրդների (Հայերի, վրացիների, ադրբեջանցիների) մի ֆեդերատիվ միութիւն էր, առանց, սակայն,

Տանոթ. – Սահմանների տեսակետից վիճելի են ճանաչվում Երևանի նահանգը, Գանձակի նահանգի Գանձակի, Ղազախի, Ջիւանշիրի, Շուշու, Զանգեզուրի և Կարեագինոյի գաւառները, Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գաւառները»:

Ինչ վերաբերում է մեկ ամսվա ընթացքում վիճելի տարածքներում զեմստվո մտցնելու մասին խոստումին, ապա ինչպես «Հորիզոնն» է գրում նոյեմբերի 29-ի իր խմբագրականում, «մի ամսով ըստ Կոմիսարիատի կարծիքի, իսկ իրականության մեջ կարող է շատ ավելի երկար լինել, որովհետև մենք ապրում ենք այնպիսի ժամանակներ, երբ դեպքերը ժամերի ընթացքում են փոխվում»:

* Ընդունվել է Խորհուրդների համառուսաստանյան երկրորդ համագումարում 1917 թ. հոկտ. 26-ին: